



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՎԱԹՍՈՒՆԸԵՑԹԵՐՐՈՐԴ

16 ՆՈՅԵՄԲԵՐ 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԻԿԷՆՏԻՍԵԱՆ

— 1873 —

առ, եթէ կարգապահութիւնը խանդարելու առիթներ 'ի մէջ բերուին, թէ եւ ժողովին ատենական կարգը կը պահանջէ անմիջապէս նախորդ նստին արձանագրութեան վրայ զիտողութիւնը եթէ կան լսել եւ զայն վաւերացնել, սակայն ինչպէս որ արդէն ըսի Բ. Գրանէն եկած հրամանագրոյ մը համաձայն այսօր սովորականէ դուրս գումարուած ըլլալուս համար, կը հարկադրիմ այս կէտը զանց առնուլ եւ արձանագրութեան վրայ ըլլալիք զիտողութիւնքն ու անոր վաւերացումն ուրիշ սովորական նիստի մը վերապահել, Երեսփոխանաց մէջէն այսօր հրաժարողներ կան, որոնց անունները կը պարտաւորիմ իմացնել ձեզ :

Ստեփան փաշա Ասլանեան,
Առաքել Սիսակ պէյ Տատեան
Կարապետ էֆ. Գարակէօզեան

Այս վերջինը թէ երեսփոխանութենէ եւ թէ հրաժարեալ Քաղաքական ժողովոյ անդամակցութենէն միանգամայն կը հրաժարի, Նոյնպէս Գրիգոր էֆ. Գարակէօզեան յատուկ նամակաւ հրաժարեալ Քաղաքական ժողովոյ անդամակցութենէն հրաժարիլը յայտնած է : 114 ընտրեալ երեսփոխան ունինք, որոնցմէ 6ը բացակայ են, ոմանք ճամբորդութեան եւ ոմանք անձնական տկարութեան պատճառաւ մէկ ուրիշ մ'ալ, այն է Փանոսեան Կարապետ էֆ. հրաժարած է իւր ընտրութենէն 'ի վեր, որով բացակայից թիւը 7 կը կազմէ, որ յաւելցնելով վերոյիշեալ 3 նոր հրաժարողաց թուոյն վրայ, կըլլան 10, եւ 114էն այս թիւը զեղչելով կը մնան 104, որոյ մեծագոյն մասըն առ նուազն 53 կընէ, եւ արդէն 60 էն աւելի երեսփոխան ունինք հոս ներկայ. ըսել է որ այսօր ժողովին օրինաւոր մեծամասնութիւնն ալ զոյացած եւ պատրաստ է : Կուզամ այժմ քանի մը խօսք ալ այսօրուան ժողովոյ գումարման նպատակին վրայ ընել եւ հասկացնել թէ ինչ է մեր այսօրուան ընելիքը եւ ի՞նչ պէտք է ըլլայ մեր վիճարանութեան նիւթը : Ինչպէս որ սկիզբէն Նախագահ Արքայանը յայտնեց, Բ. Գրանէն քանի մը օր առաջ հրամանագիր մը եկած է Արարչութեան Կրօնական ժողովին, միայն անոր գործադրութիւնն է մեր այսօրուան ընելիքը, այդ հրամանագիրը հիմայ պիտի կարգացուի, եւ Ազգային երեսփո-

խանութիւնը պիտի իմանայ անոր պարունակութիւնը եւ միայն անոր գործադրութեամբը պիտի կրնայ դադարիլ ըստ իմ տեսութեան : Բայց թէ որ մեծագոյն մասը ընդհակառակն ուրիշ խնդիր մէջ բերէ եւ ուզէ անով դադարիլ եւ դադարեցնել զժողովն, ես պարտ կը համարիմ այժմէն յայտ առնել որ այնպիսի վերահաս պարագայի մը մէջ պիտի հարկադրիմ ատենը բաժնալ, եւ այս տեսութեամբ կը հետեւցնեմ թէ բուն նիւթէն դուրս ուրիշ առարկայից վրայ վիճարանութիւն չկրնար ընել ժողովը : Իբրեւ Ատենապետ զայս յայտ առնելէ ետեւ իբր երեսփոխան ալ ուրիշ առաջարկութիւն մ'ունիմ ընելիք :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — (Ընդմիջելով)

Կաղաչեմ զձեզ դարձեալ, Երեսփոխան էֆէնտիներ, այսօր ուրիշ որ եւ է խնդիր կամ նրկատու մէկդի թողունք եւ միայն Քաղաքական ժողով մը ընտրենք որպէս զի կարենանք չուստով Պատրիարքական Տեղապահի մը ընտրութիւնը կատարել եւ ազգային գործոց անխնամ վիճակին վերջ տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարակոյս չկայ, Արքազան Տէր, որ ամեն երեսփոխան ինքնին կզգայ եւ գիտէ ձեր այդ ըսածները, ձեր կրկնումներովը կարծեմ թէ ուրիշ բան չէք ուզեր ընել, բայց եթէ ամենուն գիտցածն իրենց միտքը բերել :

Հարկ կը համարիմ նաեւ Բ. Գրան կողմէ հրաւիրեալ եկեղեցական Հարց եւ աշխարհականաց այն օրն Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին առջեւ ըսածները յիշեցնել, որոնք մեծ պատիւ կը բերեն նաեւ ձեզ. ըսին թէ Ազգը Սահմանագրութիւն ունի Տէրութենէն վաւերացեալ. տիրող օրէնք է այն եւ պէտք է անոր համեմատ վարուինք, որպէս զի խաղաղութիւնը հաստատ պահուի : Բոլոր հրաւիրեալները վստահացուցին զի. Գուռն որ այսօրուան Ընդհանուր ժողովը Բ. Գրան հրամայածը խաղաղութեամբ պիտի կատարէ, այն է հրաժարեալ Քաղաքական ժողովին տեղ ուրիշ մը պիտի ընտրէ. պէտք է որ այս արուած վրատահութիւնն 'ի դերեւ չհաննեք. մեր խօսքը բուն սպեղանի դնելու ժամն եկած է. պատենք մեր վերքերը, եւ այն մարդիկ որ միշտ պըղտոր ջուրի մէջ տեսնել կը սիրեն, թօ՛ղ ամբը-

նան : Աւստի կը կրկնեմ որ ժողովոյն այսօրուան միակ գործը, վիճարանելու նիւթը միմիայն Քաղաքական ժողովոյ մը ընտրութիւնն է, որմէ ետեւ Տեղապահ մը պիտի ընտրուի : Իսկ ուրիշ որ եւ է խնդիրներ ետ կը մնան, եւ յորժամ Տեղապահ մը ընտրուի, ժողովոյն սովորական նիստերը նորէն դուժարելով խնդրոց կարգ կանցնին եւ կը վիճարանուին անոնց վրայ :

Պահ մը առաջ ըսի թէ իբր երեսփոխան առաջարկութիւն մը ունիմ օրուան խնդրոյն վրայ, ահա ասիկ զայն կը ներկայացնեմ. Կրօնական ժողովոյ անդամոց թիւն սկիզբէն թէեւ 14 ընտրուած է. բայց անոնց մէկն՝ այն է տէր Յարութիւն քահանայ Պալատու, ընտրուած օրէն չէ ընդունած եւ հրաժարած է. նոյնպէս հրաժարած է յիշեալ ժողովէն Տ. Խորէն վարդապետ փոխանորդ Ս. Երուսաղէմայ, որով Կրօնական ժողովոյ անդամոց թիւը 12 մնացած է : Թէ որ Ընդհանուր ժողովը կրնա՞նի, այս անգամ Քաղաքական ժողովոյ անդամներն ալ 12 հոգի ընտրենք, կրօնականին հաւասար թըւով. այս առաջարկութիւնը կրնեմ չէ թէ՞ ուրիշ նպատակաւ, այլ աւելի օրինաւորութիւն մը տեսնելուս համար. որովհետեւ Քաղաքական ժողովն ընտրուելէն ետեւ Կրօնականին հետ պիտի միանայ Տեղապահի ընտրութեան համար. եթէ թիւերն անհաւասար լինին, կարծեաց տարբերութիւն կը գոյանայ այս երկուքին մէջ : Բայց եւ այնպէս, այս առաջարկութիւնս Ընդհանուր ժողովոյ կամացը կը յանձնեմ եւ անոր որոշմանը կը թողում : Իսկ ես խօսքս վերջացնելով դարձեալ կը յիշեցնեմ այն խօսքերս՝ որոնցմով յայտնեցի թէ ինչ եղանակաւ պիտի կրնամ այսօր իմ պաշտօնս վարել, եւ նորէն կը յայտնեմ թէ այն ըսած եղանակէս չպիտի դատուիմ : — Կարգը Պայրո-լաո-յի ընթերցմանն է :

Պայրո-լաո-յի ալիւն կը կարգացուի, որոյ աւասիկ պատճէնը :

Երմէնի Պաթրիզխանէսի բուհանի մէճլիսի ազասը էֆէնտիլը :

Պաթրիզ պուլուսան Մկրտիչ էֆէնտիլին պու քէրքէ մէազիրի վիճուալիչ սէրտ իլէ վուզու պուլան իսթիֆասը նէզտի ալիտէ գապուլ պուրուլուզուսան, Պաթրիզի ճէտիտին ինթիխասս ու նասպընա գատար ումուրի մի-

լէթի բույէթ վէ խտարէ՝ իլլէմէք իւզրէ պիբ գայիմագամ ինթիխասս լազըմէտէն վէ պու ինթիխասսը մէճլիսի բուհանի վէ ճիսմանի ազալէրին պիբլէշէրէք իճրա գըլըմմասը նիզամնամէի միլլի իգթիզասընտան օլուպ, անճագ պուտէֆա մէճլիսի ճիսմանի ազասը տախի իսթիֆայ իլլէմիշ օլտուզլարընա պինայէն, էվիլէլ էմիրտէ մէճլիս ումուլինին ագտ իլէ պիբ մէճլիսի ճիսմանի հիլէթինին թէշքիլինէ վէ տէրէճէյի սանիլէտէ անընլա պիլ իթթիֆագ մինասիպ վէ էշլիլէթլի պիբ զաթըն պաթրիզ գայմագամը ինթիխասսը իլլէ մազպաթասընըն Պապը Ալիլէ թագաթիմինէ հիսմէթ իլլէյէլէր տէյու :

290 Բամազան 28
289 Թշրինի սանի 6

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Շատ չնորհակալութիւն ունիմ Ատենապետ էֆէնտիլի ըրած յայտարարութիւններէն, նմանապէս չնորհակալութիւնս կը յայտնեմ այն էֆէնտիլներուն, որք Բ. Գրան առջեւ պաշտպանեցին : Ազգային Սահմանագրութիւնը, Ատենապետ էֆէնտիլ յայտնեց նաեւ թէ Պայրո-լաո-յի գուրս խընդիր հանելու չպիտի կրնայ ներել իբր Ատենապետ. բայց ինք իբր երեսփոխան խնդիր մը յարոյց, 14 եւ 12 թիւերու խնդիր մը, որ թէ եւ մեծ բան մը չէ եւ կրնայ զիւրութեամբ լուծուիլ. սակայն կը հարցնեմ թէ մենք ալ իրեն հետեւելով կրնամք առաջարկութիւններ ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես թուոյն վրայ իբր երեսփոխան առաջարկութիւն մը ըրի զիւրութեան համար, սակայն Պայրո-լաո-յի գէճէն չչեղեցայ, ուստի իբր Ատենապետ դարձեալ կըսեմ թէ այսօրուան խնդիրը միմիայն Քաղաքական ժողովոյ ընտրութիւնն է. անկէ դուրս առաջարկութիւն կամ վիճարանութիւն ներելի չէ ընել :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Վսեմ. Արտաքին գործոց Պաշտօնեայն Քահալիբելով Հայոց նշանաւոր մեծ մարդիկն յայտարարած ատենը թէ Պատրիարքը հրաժարական տուած է Բ. Գրան եւ հրաժեշտն ընդունուած, նոյնպէս Քաղաքական ժողովը հրաժարած է եւ հրաժեշտն ընդունուած, եւ թէ Տեղապահ մը ընտրել

պէտք է, այդ մեծ մարդիկն անք եւ թէ մենք օրէնք ունինք, ըստ այնմ պիտի ընտրենք թէ՛ Տեղապահ եւ թէ՛ Քաղաքական ժողով, այս յուշարարութեան ատեն մտայնը եւ արդեօք յիշելու նաեւ թէ իրաւ Պատրիարքը հրաժարած է, նոյնպէս Քաղաքական ժողովը հրաժարած, բայց դեռ այդ հրաժարականներն Քնդհանուր ժողովին չեն ընդունուած. արդեօք Քնդհանուր ժողովին ընդունելը կամ չընդունելը լուծեան տակ թողուած է: Ինչպէս կը լինի այս առանց Քնդհանուր ժողովոյ գիտութեան, խնդրեմ գիտանէն որ բարեհաճի այս կէտին վրայ բացատրութիւն մը տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը չը կրնար ձեր ուզած բացատրութիւնը տալ վասն զի խնդրէն դուրս է. ժողովն այսօր գումարուած է Պոլսոյ լոյսը կը հրամայէ Քաղաքական ժողով մը կազմել եւ անմիջապէս Տեղապահ մը ընտրել, Հիմա ուրիշ խնդրոց վրայ վիճաբանելու ժամանակը չէ, երբ ամեն գործ լմննայ եւ Տեղապահ մը դայ, այն ատեն խնդրոց կարգ կանցնին եւ կը խօսուին այդ պարագաներուն վրայ. իսկ այսօր խօսք եւ պատասխան չկայ այդպիսի հարցմանց:

ԷՆՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ ըսելիքս ալ Մարկոս էֆէնտի ըսածին մօտ է. սակայն դիւանին տուած պատասխանին վրայ խօսքս ետքի կը պահեմ:

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Օսմանեան բարեխընամ կառավարութիւնն իւր հպատակ ազգաց վրայ ունեցած խնամոցն ապացոյց տուած է մեզի Սահմանադրութիւն մը չնորոգելով, որով Ազգն Երեսփոխանական ժողով մ'ունեցած է. կառավարութիւնը ճանչնալով սոյն ժողովին կազմութիւնը թէ եւ հրամանագիր մը զրկած է, սակայն չարգելուր երբէք երեսփոխանաց վիճաբանելու ազատութիւնը, ուստի ես իբր Հացոց երեսփոխան իմ Սահմանադրական իրաւունքս պիտի վայելեմ, ազատութիւն ունիմ խօսելու եւ ինձ յանձնուած աւանդը պաշտպանելու. այնպիսի կէտեր կան որոնց վրայ տեղեկութիւն կամ բացատրութիւն պիտի ուղեմ եւ իմ կարծիքս պիտի յայտնեմ, Սահմանադրութիւնը տուած է ինձ այդ իրաւունքը:

Եւ երբէք կառավարութիւնը չարգելուր ինձ այս իրաւունքս գործածել: Ազգային երեսփոխանութիւնն ո՛չ Սրբազան Պատրիարքին եւ ո՛չ Քաղաքական ժողովոյն հրաժարականները չընդունած, կը հրաւիրուի այսօր Տեղապահ մը եւ Քաղաքական ժողով մը ընտրելու, առանց գիտնալու թէ ի՞նչ ըրաւ Սրբազան Պատրիարքը եւ ի՞նչ գէտքեր տեղի ունեցան վերջին 2 ամսուան մէջ, յորմէ հետէ Քնդհանուր ժողով չէ եղած: Ուրիմն թոյլ տուէք, Ատենապետ էֆէնտի որ իմ պարտքս կատարեմ՝ եթէ ես լռեմ, ապագան զիս կը դատապարտէ: Սրբազան Պատրիարքը հրաժարական տալու էր, բայց . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (ընդմիջելով) — Չեմ կրնար թոյլ տալ ձեզ որ այդ խօսքերը շարունակէք. արդէն ըսի ժողովոյն որ իր վստահութեամբ դիւ Ատենապետ ընտրած է, թէ ի՞նչպէս պիտի վարուիմ ներկայ պարագայից մէջ, ուստի չեմ կրնար խօսք տալ եթէ խնդրէն դուրս չեղել կուզէք:

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԷՖ. (չարունակելով) — Բայց ի՞նչպէս չխօսիմ. երեսփոխանական իրաւունքը կը պահանջէ յինչն զայդ. այդ իրաւունքն իմն չէ. եթէ իմն ըլլար թերեւս չկրնայի խօսիլ. նոյն իսկ կրօնական ժողովոյ հրաւիրագիրը հակառակ է Պոլսոյ լոյսը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը Պոլսոյ լոյսը իմաստն իր հասկըցած կերպովը մեկնելով բացատրեց թէ այսօրուան Քնդհանուր ժողովը Քաղաքական ժողովոյ ընտրութեան համար հրաւիրուած է. թէ որ իմ հասկըցածիս պէս չէ, առանց քուէարկութեան դնելու չեմ կրնար թոյլ տալ որ վիճաբանութիւն ըլլայ այս կէտին վրայ: Ամեն օրինակոր ատեններու մէջ այսպէս է, երբ ժողովոյն կարծիքը դիւանին կարծեացը կը հակառակի, քուէի կը դրուի երկուքէն մէկն ընդունուելու համար: Բայց թէ որ Պոլսոյ լոյսը վիճաբանութեան դրուելու եղանակն ընդունուի եւ որոշուի, այդ մասին ինչպէս արդէն յայտնած եմ, չեմ կրնար զիջում ընել. այլ կը գոցեմ ատենը եւ կը հրաժարիմ, ժողովոյն կը մնայ իմ տեղս ուրիշ Ատենապետ մը ընտրել եւ շարունակել այդ վիճաբանութիւնները: Պոլսոյ լոյսը իմաստը պարզ է եւ մէկին. « Հրաժարեալ Քաղաքական ժողովին տեղ ուրիշ մը ընտրել կը պատուիրէ »: Թէ որ այս կէտը լաւ չէ հասկըցուած, կրնանք Պոլսոյ լոյսը անգամ մ'ալ կարդալ:

Սյու միջոցին Պոլսոյ լոյսը նորէն կը կարդացուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ դրան հրամանը. նախ եւ առաջ Քաղաքական ժողով եւ ապա Տեղապահ մը ընտրել, եթէ ասկէ դուրս բան մը կը հասկընաք կամ կուզէք հասկընալ, ես կը պարտաւորիմ քուէի դնելու:

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Ո՛չ, առանց քուէի դնելու պէտք է որ խօսինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չեմ կրնար թոյլ տալ, Մազլմեան էֆ. որ խնդիրէն չեղելով դու քու միտքդ դրածները խօսիս եւ վիճաբանութեան դուռ մը բանաս, որով ուրիշներն ալ վիճաբանութեան մասնակցին: Պէտք է նախ քուէի դնեմ Պոլսոյ լոյսը վիճաբանելի ըլլալը կամ չըլլալը. իմ պաշտօնիս բնութիւնն այսպէս կը պահանջէ:

Մազլմեան էֆ. նորէն կը խօսի եւ Ատենապետ էֆ. զայն կը լռեցընէ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Այդ Պոլսոյ լոյսը անվիճաբանելի է. պիտի հաստատեմ զայս. խօսք կուզեմ քուէարկութենէ առաջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քուէարկութենէ առաջ չեմ կրնար խօսք տալ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Ես միայն այդ Պոլսոյ լոյսը վիճաբանելի ըլլալուն կամ չըլլալուն վրայ պիտի խօսիմ առանց վիճաբանութիւն բանալու:

(Այս պահուս երկարատեւ շշուկ եւ խօսակցութիւն ժողովականաց տմանց մէջ):

Ատենապետ էֆ. (շշուկը հանգարտեցնելով) — Քնդհանուր ժողովին ներդաշնակութիւնը խանգարող եւ այսօրուան գործողութեան արգելք եւ խոչնդոտ յարուցանող որ եւ է անձ ըստ իմ տեսութեան պատասխանատու եւ պատճառ կրնայ ըլլալ այնպիսի անհաճոյ դէպքերու, որոնց վրայ պահ մը կասկածներ նըշմարուեցան ուրիշներու կողմէն: Տէրութիւնը

ճանչցաւ եւ յարգեց մեր Սահմանադրութիւնը եւ մեր խնդրանացը զիջանելով ըսաւ. « գացէք ընտրեցէք քաղ. ժողով մը եւ Տեղապահ մը »: Հիմայ թէ որ մեք Սահմանադրութիւնը չզրկենք, թէ որ այսօր կարող չըլլանք Քաղ. ժողովոյ ընտրութիւնը կատարել, Դուռը պիտի ընտրէ թէ Տեղապահը եւ թէ Քաղ. ժողովը. ինչպէս յայտնեց Արտ. գործոց Վսեմ. պաշտօնեայն այն օրը՝ երբ իրեն ներկայացանք: Թող վկայեն յանուն ճշմարտութեան այն եկեղեցական Հայրերը՝ որ մեզի հետ ներկայ գրտնուեցան նոյն օրը եւ լսեցին յիշեալ Վսեմ. Պաշտօնէին խօսքերը. թող վկայէ մանաւանդ նոյն ինքն Տ. Թորէն եպիսկոպոս, որ նոյն պահուն հաստատեց յիշեալ Պաշտօնէին առջեւ թէ կարող ենք մեր Սահմանադրութեան համեմատ Տեղապահի ընտրութիւնը կատարել եւ տեղեկագիրն ուղարկել ի Բ. Դուռն:

Տ. Թորէն եւ **Տ. Նիկողայոս Սրբազանք** եւ այլք. — Այո՛, այո՛, այնպէս եղաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ոմանք յանուն Երեսփոխանական ազատութեան խօսիլ կուզեն, շատ լաւ. ամենն ալ նոյն խօսելու ազատութիւնը եւ իրաւունքն ունին, եւ պիտի խօսին ժամանակին. ես ալ խօսելիքներ ունիմ, բայց հիմա չէ ժամանակը: Մենք Պօլսեցիքս ոչ ուրիշ բաներու համար այնչափ քաջ ենք, որչափ Պատրիարքի ընտրութեան եւ անկման մէջ, խօսքս ամփոփելով դարձեալ կըսեմ. Պոլսոյ լոյսը համեմատ Քաղ. ժողով պիտի ընտրենք. թէ որ Պոլսոյ լոյսը վիճաբանութեան պիտի գրուի, ես կը պարտաւորիմ գոցել ատենը. ժողովը կրնայ ուրիշ Ատենապետ մը ընտրել եւ շարունակել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Խ. ԷՖ. — Խօսք ուզած էի Պոլսոյ լոյսը վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէկեան էֆ. ալ ուզած է, կուտամ խօսք թէ որ վիճաբանելի կէտէն դուրս չպիտի ելնէք:

ՂԱԶԱՐՉՍԵԱՆ Խ. ԷՖ. — Իմ ըսելիքս սա է. Պոլսոյ լոյսը համաձայն պէտք է վարուինք եւ ընտրենք Քաղաքական ժողովը. սակայն Ատենապետ էֆ. անդամոց թիւը 12 ի իջեցնելու առաջարկութիւն ըրաւ արդի կրօնական ժողովոյ անդամոց թիւոյն պակասը ըլլալու:

լալուն պատճառաւ : Այդ կէտն արդէն վերա-
քննուած , 14 թիւն ընդունուած ու որոշուած
ըլլալով , ըստ իմ կործեաց չենք կրնար նա-
խորդ որոշում մը կոխել անցնել : Խոհեմութիւ-
նը պարտք կը դնէ մեր վրայ Պոլսոյ շրջան ան-
միջապէս գործադրել եւ մեր պաշտօնը կատա-
րել խաղաղութեամբ :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ . ԷՑ . — Ազգին շահը կը
պահանջէ որ Պոլսոյ շրջան համեմատ գոր-
ծադրութիւն լինի . աւստի պէտք է որ ղիւանն
անմիջապէս քուէթղթերը ցրուէ : Քաղաքական
ժողովոյ ընտրութիւնը կատարուելու համար :
Եթէ իրաւունք պաշտպանելու կէտեր կան ,
խօսելիքներ կան , ինչպէս որ ես ալ խօսելիքներ
ունիմ , տակաւին Գալիպոլիէն ինչչեց , դեռ
ժամանակ ունինք , կրնանք խնդրոց կարգն անց-
նել եւ վիճարանիլ ՚ի դէպ ժաման :

ՊԵՅԵԱՆ Թ . ԷՑ . — Խոստացայ Պոլսոյ շրջան
պիտի վրայ խօսել առանց վիճարանելու : Խոս-
տուածս պիտի կատարեմ : — Իբրեւ Երեսփոխան
պարտք կը համարիմ ըսել թէ Պոլսոյ շրջան
մը վիճարանութեան չենթարկելու սկզբունքն
անպատճառ ընդունելի չէ . այո՛ , Պոլսոյ շրջան
պիտի մը որչափ բարձր եւ ակնածելի է մեզ հա-
մար , դարձեալ կրնայ վիճարանութեան են-
թարկել ժողովոյ մէջ . ղի թերեւս որ մը սխալ
հիման մը վրայ հրամանագիր գայ Բ . Իսկէն .
միթէ կրնանք անպատճառ գործադրել եթէ
սխալ հասկացողութեան մը վրայ հիմնուած ըլ-
լայ այն հրամանագիրը . անտարակոյս ո՛չ . նոյն
խիւ բարեխնամ կառավարութիւնն ալ յօժարա-
կամ կրնողունի Ընդհանուր ժողովին ընկելը ղի-
տողութիւնն եթէ այնպիսի սխալ տեղեկու-
թեան մը վրայ հիմնեալ հրամանագիր մը գալու
պարտաւոր մը պատահի : Իսկ ներկայ Պոլսոյ շրջան
պիտի գործադրութիւնն անհրաժեշտ է , որովհե-
տեւ Ամեն . Խրիմեան Սրբազան չգիտենք ի՞նչ
հարկեցուցիչ պատճառներէ ստիպեալ իւր վեր-
ջին հրաժարականն առ Բ . Իսկէն մատուցած
է եւ ընդունուած . ասի կատարուած իրողու-
թիւն մ'է եւ Պատրիարքական աթոռը թա-
փուր մնացած է այսօր , պէտք է վաղընդհուպ
Պոլսոյ շրջան պիտի գործադրելով Քաղաքական
ժողովոյ ընտրութեամբ Տեղապահ մը ընտրել ,
որպէս ղի Պատրիարքարանն անխնայութեան
մէջ չմնայ , եւ Ազգին ու Տէրութեան մէջ պէտք

եղած միջնորդը հաստատուի : Իսկ Պոլսոյ շրջան
պիտի գործադրութեամբ պէտք է կար-
ծել թէ մեր իրաւունքները կը զոհուին , ո՛չ եր-
բէք . թո՛ղ Մաղլըմեան էֆ . ի եւ ուրիշներու
խիղճը հանդարտ ըլլայ . ապագային մէջ ամեն
բան կրնայ քննուիլ , եւ լուրջ վիճարանու-
թեան ենթարկել խնդրոց կարգն անցնելով :

Այս միջոցին շատ մը ձայներ անհամբե-
րաբար Քաղաքական ժողովոյ ընտրութիւնը
կատարել կը խնդրեն :

Ատենապետ էֆ . տեսնելով որ ժամն ութը
քառորդ անցած է եւ շատերուն կողմէ փափաք
կը յայտնուի Քաղաքական ժողովոյ ընտրու-
թեան ձեռնարկելու , քուէթղթերը ցրուել
կուտայ , եւ կէս ժամ դադար տալով ժողովոյն
կը հրաւիրէ Երեսփոխաններն որ Քաղաքական
ժողովոյ համար 14 անդամ ընտրեն , այնպիսի
անձինք՝ որ իրենց անկողնակալ եւ չէզոք զը-
րութեամբը կարող լինին Ազգին արդի ծանր
վիճակին օգտակար ծառայութիւն մատուցա-
նել :

Ժամն 9 ին քառորդ մնացած նորէն ատ-
ենանը բանալով , Ատենապետ էֆ . յառաջ քան
զքուէթղթերը կը ծանուցանէ ժողովոյն թէ
հրաժարեալ Քաղաքական ժողովոյ անդամներն
այս անգամ վերընտրելի չեն կրնար ըլլալ ըստ
38 ըդ . յօդուածոյ Սահմանադրութեան :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ . ԷՑ . — Կը սխալիք , Ա-
տենապետ էֆ . այդ յօդուածը վերաքննուե-
ցաւ եւ գործնականապէս հերքուեցաւ . ասոր
ապացոյցն է Ապրօ էֆ . ին հրաժարելէն . ետեւ
դարձեալ ընտրուիլն ասկէ առջի ընտրութեան
մէջ :

ՊԵՅԵԱՆ Թ . ԷՑ . — Կարծեմ այդ յօդ-
ուածը վերաքննուած ըլլալուն համար չէր որ
Ապրօ էֆ . վերստին ընտրուեցաւ , այլ իր
պաշտօնավարութեան շրջանը լրացուցած չըլ-
լալուն համար : Եթէ ասանկ է , արդի հրաժար-
եալ Քաղաքական ժողովոյ անդամներն ալ զըր-
կուած չեն համարուիր վերընտրութենէ , որով-
հետեւ շրջանին լրացուցած չեն , դեռ ամբողջ
երկու տարի պաշտօն վարած չ'ըլլալով . հե-
տեւապէս վերընտրելի են եւ չեմ կարծեր որ
օրէնքը արգելք մը յարուցանէ այս պարագա-
յիս մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Գիւանը կը տեսնէ որ
Սահմանադրութեան այն յօդուածին վրայ , զոր
պահ մը առաջ յիշեցուց , այլ եւ այլ մեկնու-
թիւններ կուտան ոմանք , յորմէ Սահմանադ-
րութեան ողւոյ եւ տառական գործադրու-
թեան խնդիր մը կը ծագի : Գիւանը կարող չէ
այդպիսի մեկնութիւններու համաձայն գործադ-
րել օրէնքը եւ հեռանալ անոր տրամադրութե-
նէն . եթէ Սահմանադրութեան համեմատ պի-
տի շարժինք , պէտք է անոր յօդուածոց տրա-
մադրութիւնները յարգենք , եւ չէ թէ երբե-
մըն տառը եւ երբեմն ոգին փնտրուելու ելնենք
Քիչ մը առաջ Ապրօ էֆ . ին վերընտրութիւնն
իր օրինակ մէջ բերուեցաւ , ատի մեզի հա-
մար օրէնք չկրնար ըլլալ . եթէ ամեն այսպիսի
զեղծումներն իր օրինակ մէջ բերուելու ըլլանք ,
ըսել կըլլայ թէ երբեմն տառը պիտի յարգենք
եւ երբեմն ոգին :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ . ԷՑ . — Գիւանը լաւ կը
նէր եթէ փոխանակ տարածամ իմաց տալու
զայդ ժողովոյ դադար տալէն առաջ յիշեցնէր .
որովհետեւ հիմայ ամենս ալ խորհրդակցու-
թեամբ քուէթիս պատրաստած եւ բերած եմք :
Ուստի կառավարիկեմ որ քուէններն ընդունուին
եւ քուէհամարն ըլլայ , յետոյ անոր արդիւն-
քին վրայ վիճարանինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Իրաւացի է Օգոսէն էֆ . ի
ըսածն , թէ եւ իմ բռնած ձօնէն մէջ այս կէտն
ալ կարճ , սակայն ներեցէք ըսել թէ երեսփո-
խան էֆէնտիներէն մէկն այնչափ նեղեց յիշու
այսօրուան խնդիրէն դուրս վիճարանել ուղե-
լով իր խօսելու իրաւունքը պաշտպանելու
առթիւ , որ դադարէն առաջ մոռցայ այդ կա-
րեւոր կէտը բաց ՚ի բաց յիշեցնելու , թէպէտ
եւ անուղղակի կերպով ընտրելիները ինչ ան-
ձերէ ըլլալը յայտարարեցի :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ . ԷՑ . — Չենք գիտեր ,
քուէ տուողները կարելի է ուշադրութիւն ը-
րած են այդ կէտին . իսկ թէ որ ըրած չեն ,
թո՛ղ քուէհամարն ըլլայ , անոր արդիւնքը տես-
նենք եւ յետոյ խնդիր ընելով վիճարանինք :

ԻՒԹԻՒՆՃԵԱՆ Կ . ԷՑ . — Ասկէ առաջ Քաղ-
ժողովոյ մը ընտրութեան ժամանակ թէ եւ Էն-
րաժարեալ անդամներէն ոմանք վերընտրելի ե-
ղան , բայց այն ատեն սա՛ պատճառը ցոյց

տրուեցաւ թէ անոնք սահմանադրութեան հա-
մեմատ Ընդհանուր ժողովն ընտրուած չէին
եւ Ընդհանուր ժողովն ալ իր ընտրած չըլլալը
պատճառ բռնելով անոնցմէ զոմանս վերստին
ինք ընտրեց : Հարկաւ նոյն ժամանակին ատե-
նադրութիւնը կը ցուցնէ զայս եւ ես ալ կը
յիշեմ որ Ընդհանուր ժողովը բացարձակ տը-
նօրէնութիւն կամ որոշում մը ըրած չէր վե-
րընտրութեան մասին : Ուստի ես ալ Ատենա-
պետ էֆ . ի ձայնակցելով կըսեմ թէ պէտք է
Սահմանադրութեան համաձայն վարուինք :

ՊԵՅԵԱՆ Թ . ԷՑ . — Իւթիւճեան էֆ . ի
խօսքին նայելով տակաւին Ընդհ . ժողովն ո-
րոշում մը ըրած չէ եղեր շրջանը չլրացնող հը-
րաժարեալ Քաղաքական ժողովոյ անդամները
վերընտրելի ըլլալու համար : Նոյն իսկ իր խօս-
քերէն կը հետեւի որ եթէ Ընդհանուր ժողովը
բացարձակ տնօրէնութիւն կամ որոշում մը ը-
նէ այս մասին , կարելի պիտի ըլլայ վերընտ-
րել շրջանը չլրացնող Քաղաքական ժողովոյ
մը անդամները :

Արդ՝ Ընդհանուր ժողովոյ այդ կամքը՝
զոր պէտք է յարգենք , պիտի տեսնուի Քա-
ղաքական ժողովոյ ընտրութեան քուէարկու-
թեանը մէջ , որ ի ձեռին պատրաստ ունինք :
Ուստի կառավարիկեմ որ քուէարկութիւնը կա-
տարուի եւ քուէից արդիւնքէն ժողովոյն կամ-
քը հասկըցուի :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է . ԷՑ . — Կառավարիկեմ որ
Սահմանադրութեան ճիշդ բառին եւ տառին
համեմատ կատարուի այս ընտրութիւնը եւ հը-
րաժարեալ Քաղաքական ժողովը վերընտրելի
չըլլայ :

ԻՒԹԻՒՆՃԵԱՆ Կ . ԷՑ . — Հրաժարեալ Պէկ-
եան էֆ . չարաչար կը մեկնէ իմ ըսածս եւ . . .

Իսկոյն ընդմիջելով Պէկեան եւ Խօճասար-
եան էֆէնտիները դառնապէս կը բողոքեն Իւ-
թիւճեան էֆ . ի արտասանած կրթաբարձր բա-
ռին դէմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . (Առ Իւթիւճեան էֆ .) —
Կաղաչեմ , իրաւունքի դպչելու խօսք մի ընէք :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ . ԷՑ . — Փոխանակ աղա-
չելու ՚ի կարգ հրաւիրեցէք , Ատենապետ էֆ .

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ.— Ես հրաժարեալ եմ թէ չէ, վերջին ատենադրութեանց վաւերացման միջոցին պիտի տեսնուի. կամ այդ խնդիրը թող այժմէն յուզուի, եւ կամ չէ նէ հատուցում կը պահանջեմ. ապա թէ ոչ պէտք է որ ես մեկնիմ թէ որ հրաժարեալ կը համարուիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը ցաւիմ որ Իւթիւճեան էֆ. ան ժամանակ հրաժարեալ ըստն արտասանելով բողոքոյ տեղի տուաւ. վասն զի հիմայ իրաւունք չէր ըսել, այլ կրնար ատեանի բացումէն առաջ ընել այդ դիտողութիւնը, եթէ հրաժարեալ երեսփոխան մը հոս նստած էր: Պէկեան էֆ. Նախագահ Տ. Թաղէոս Արքազանէն հրաւիրագիր ընդունելով եկած նըստած է այսօր Ընդհանուր ժողովոյ մէջ, եւ մինչ վիճաբանութիւն կըլլայ Սահմանադրութեան մէջ յօդուածին վրայ, այս վիճաբանութեան մէջ մէկը միւսին դուն հրաժարեալ էս, դուն յրաժարեալ էս, եւ այլն ըսելով անձնական վէճ յարուցանելը ժողովին ներդաշնակութիւնը կը խանգարէ: Ուստի Դիւանին պարտաւորութիւնն է 'ի կարգ հրաւիրել եւ չներել որ եւ է մէկու մը այնպիսի խօսքեր ըսելու, որոնց տեղը եւ ժամանակը չէ:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Խօսք կուզեմ, պատասխան պիտի տամ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Չեմ կրնար ներել որ անձնական խօսքեր ընէք, դուք որ խմբագրական պաշտօն ունիք եւ ձեր գրչովը Ազգին կը ծառայէք, ինչպէս շատ անգամ յայտնած էք, պէտք չէ որ հոս անձնական վէճեր ընէք:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Հրաժարեալ Քաղաքական ժողովը թէ եւ 72 յուլիսի մէջ ընտրուեցաւ եւ իր պաշտօնը սկսեց եւ վարեց մինչեւ 73 յուլիսի վերջն. որ ըսել է տարի մը միայն պաշտօն կրցաւ վարել. բայց իւր ընտրութեան օրինական թուականը 72 մայիս 1 էն կ'սկսի: Հիմայ նոր ընտրուելիք ժողովը նախորդին շարունակութիւնը պիտի ըլլայ թէ ոչ ամբողջ երկու տարի պաշտօն պիտի վարէ: Եթէ այս գիտնանք, խնդիրն ինքնին կը լուծուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Պուրուլթուն կըսէ թէ Քաղաքական ժողով մը կազմեցէք որ սահմա-

նադրապէս Տեղապահ մը ընտրուի, ետքն ալ Պատրիարքը պիտի ընտրուի, այն ատեն կրնայ այդ որոշուիլ:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Որովհետեւ հրաժարեալ Քաղաքական ժողովը դեռ 9 ամիս ժամանակ ունի, պէտք է որ գալիք Քաղաքական ժողովն անոր շրջանը լրացնէ ինչպէս որ եղած է ասկէց առաջ երկու անգամ Քաղաքական ժողովներու տարածամ հրաժարմանց ատեն: Եւ որովհետեւ գալիք Քաղաքական ժողովը նախորդին շարունակութիւնը կը համարուի եւ իւր պաշտօնը կը դադրի առաջիկայ մայիս 1 ին, այս ատեւութեամբ հրաժարեալ Քաղաքական ժողովոյ անգամը վերընտրելի են:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Քանի որ հիմայ վերաքննութիւն չպիտի ընենք, եւ առանց վերաքննութեան դժուարին է այդ կէտերը լուծել, պէտք է որ ըստ սահմանադրութեան ընենք այսօր ընտրութիւնը: Եթէ ասկէ առաջ Քաղաքական ժողովոյ անդամներէն ոմանք վերնտրելի եղան, անոնք Պատրիարքէն ընտրուած էին, որովհետեւ Ընդհանուր ժողովս Խրիմեանին վերայ այնքան վստահութիւն ունեցած էր որ նորին Արքայութեան յանձնեց Քաղաքական ժողով մը ընտրել կազմել եւ գործել, ետքէն երբոր ինք ընտրեց հրաժարեալները 'ի պաշտօն կոչեց, այս էր Իւթիւճեան էֆէնտիին բացատրել ուզածը, իսկ այսօրուան ընտրութիւնը ընաւ նախկին ընտրութեան եղանակին չի նմանիր, տակաւին քուէները առնուված չեն, կըրնաք չուտով զայն սրբագրել եթէ հրաժարեալներէն ընտրած էք:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Շնորհակալ եմ, Ատենապետ էֆ. որ Պէկեան էֆ. իմ խօսքերս չարաչար մեկնած ըլլալը դուք իսկ հաստատեցիք եւ շտկեցիք: Աւելի շնորհակալ կըլլայի եթէ Դիւանը ժողովոյն նիստը բացուած ատեն խնդիր ընէր ու որոշել տար թէ հրաժարեալ երեսփոխան մը պիտի կրնայ ժողովին մէջ աթոռ ունենալ եւ խօսիլ: Դիւանին պարտքն էր Ատենադրութիւնը տեսնել եւ գիտնալ թէ Պէկեան էֆ. հրաժարուած է, Դիւանը զայդ չընելով կերպով մը իրաւունք տուաւ մեզի այն ակնարկութիւնն ընելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ատենադր քացած ժամանակս ըսի որ այսօրուան նիստը արտաքոյ կարգի նիստ մըն է, եւ նախորդ նստի ատենադրութեանց վրայօք ըլլալիք դիտողութիւնները եւ վաւերացումը ուրիշ նստի մէջ պիտի ըլլան, ուստի Դիւանը իւր պարտքը կատարած կը համարի:

Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ.— Ատենապետ էֆ. ի ըրած առաջարկութիւնը Սահմանադրութեան տառին հետեւելով յուզմանց առջեւն առնելու նպատակն ունի, որ գովելի է յոյժ ըստ իս, եւ որուն շնորհակալութիւն եւս կընծայեմք մինչեւ ցարդ ցրցուցած ջանից եւ անձնութեանը համար: Սակայն որովհետեւ Սահմանադրութիւնը ներկայ դէպքը չէ նախատեսած եւ յիշուած յօդուածոյն տրամադրութիւնը, երկամեայ շրջանին աւարտումէն յետոյ լուծեալ ժողովոյն վրայ կը խօսի յայտնապէս եւ ոչ թէ երկամեայ շրջանը չլրացած հրաժարեալ ժողովոյ մը վրայ, ինչպէս ներկայ դէպքն է, ուստի օրինաց տրամադրութիւնն առ այս տարածելն օրինաւոր չերեւիր ինձ, եւ վիճաբանութեան ու ժողովոյս մասնաւոր որոշման կարօտ կը տեսնեմ այս խնդիրը, այլ որովհետեւ քուէները պատրաստուած են եւ ինչ արդիւնք ունենալիքը չգիտեմք. ուստի առ այժմ այս խնդիրն 'ի կախ թողուք, կատարենք նախ քուէարկութիւնը, եւ դուք գոյացած արդիւնքըն ինքնին կը լուծէ յարուցեալ խնդիրը առանց վիճաբանութեանց կարօտելու: Խիստ հաւանական է որ քիչերը բացարձակ առաւելութիւն ստանան եւ երկրորդ քուէարկութիւն մը անհրաժեշտ է. ենթադրենք թէ հրաժարեալներէն ոմանք եւս գտնուին ատոնց մէջ. գուցէ անոնք արդէն պնդեն իրենց հրաժարականն ու չընդունին նոր ընտրութիւնը, որով խնդիրը բնական ու պատուաւոր լուծում մը կ'ստանայ. իսկ եթէ ոչ, կրնանք այն ատեն անոնց ընտրութիւնը պիտի ընդունուի՞ թէ ոչ, խնդիր ընել ու որոշել իսկոյն կամ մասնաւոր հետեւեալ նիստին մէջ, յորում մտքերն եւս պատրաստուած ըլլալով յայս խնդիր, լուծումըն եւս չուտով կրնայ տրուիլ հասուն խորհրդածութեամբք: Իժարադարար դիւանն առաջմընէ չյիշեցուց այդ կէտը, որպէս զի խնդիրն այսպէս չսերտուած չեւէր 'ի հանդէս աւելորդ

վիճաբանութեամբք ժամավաճառ լինելով: Մի գուցէ ասով ժողովին ներդաշնակութիւնն աւարուելու, խնդիրն երկարաձգուելու եւ այսօրուան նիստն ասպարդիւն լինելու պատճառ տամք: Ուստի ես կատաշարկեմ որ նախ քուէարկութիւնը կատարուի, արդիւնքը տեսնուի եւ ըստ այնմ յետոյ որոշում մը տրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խորէն Արքազանին ըսածներէն սա կըհասկընամ թէ ինչ որ հիմա դիւրութեամբ պիտի կրնանք կատարել, վաղը շատ մեծ դժուարութեամբ պիտի ըլլայ: Ըսուեցաւ թէ դիւանն առաջինէ չյիշեցուց. կարծեմ թէ պակասութիւն մը ըրած չէ դիւանը. որովհետեւ կէս ժամ դադար տուած ատենըս ըսի որ այնպիսի անձինք բնութեցէք որոնք չէզոք եւ անկողմնակալ ըլլան որպէս զի կարողանան ազգին արդի վիճակին օգուտ եւ դարման ասնիլ: Տակաւին քուէնիս չենք տրուած, ինչու ըլլանք ժամավաճառ, ես Սահմանադրութեանէն չեմ կրնար շեղիլ, եւ իմ պաշտօնս օրինապահութեամբ միայն կրնամ կատարել. չեմ կրնար ընդունիլ որ քուէարկութեանէն յետոյ վիճաբանելի Քաղաքական ժողովոյ անդամներ ունենանք. պիտի գործադրեմ Սահմանադրութեան այն յօդուածը, որ հրաժարեալ անդամոց համար վերընտրելի չեն կըսէ: Յարգեցէք օրինապահութիւնը եւ Ձեր քուէթղթերը սրբադրելու հոմար 5 վայրկեան բաւական կը համարիմ եւ կաղաչեմ չուտ մը սրբադրեցէք որ քուէարկութիւնը կատարուի:

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ.— Այո, Ատենապետ էֆ. մեք ալ կը յարգենք Սահմանադրութիւնը. սակայն օրէնքին պայմանադրած շրջանը չլրացնող Քաղ. ժողովոյ անդամոց վերնտրելութեան կամ ոչ վերնտրելութեան խնդիր մը կայ. այս ալ վիճաբանութեամբ կրնայ լուծուիլ: — Օրինապէս պայմանաժամը չլրացած Քաղաքական ժողովոյ մը մէջ կրնայ անհամաձայնութիւն պատահիլ իր մէկ քանի անդամոցը պատճառաւ եւ կը հրաժարի. Երեսփոխանութիւնը կուսնելով կրնայ վերստին ընտրել դուրս ձգելով նոյն մէկ քանի անդամները: Լաւ նկատելու է այս կէտը. թէ որ ասանկ չըլլայ, ապագային մէջ կրնայ ծանր հետեւանք ունենալ: Սահմանադրութիւնն էրիւրաբար անգամ մը փոփոխուի եւ վերադարձի լուծում

ըսած է, անոր համար որ Ազգային պաշտօնէ-
ութիւնը մենավաճառ չդառնայ խուճի մը ան-
ձանց ձեռքը, սակայն ըստ Սահմանադրու-
թեան երկու տարիէն առաջ ալ պէտք չէ որ
փոխուին, եւ եթէ տարածամ հրատարին,
կրնան վերնտրելի ըլլալ քանի որ օրինական
պայմանաժամը չեն լրացուցած:

ՀԱՆՔԱՅԵԱՆ Բ. ԷՖ. — Իրբեւ հրատարեալ
Քաղաքական ժողովոյ անդամ կը յայտարարեմ
որ այսուհետեւ չպիտի կրնամ նոյն պաշտօնն
ընդունիլ:

ԲԻՒՐԲԱԿՅԱՆ Բ. ԷՖ. — Նոյնը կը
յայտարարեմ:

ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ Ա. ԷՖ. — Ընդհանրապէս կը
յայտարարեմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քուէթիթերը բաժ-
նուելէ եւ իւրաքանչիւր երեսփոխան դադարի
ատեն իւր քուէն պատրաստելէ ետեւ, այժմ
մինչ քուէարկութիւնը պիտի ըլլայ, նոր խըն-
դիր մը հանեցիք, Ատենապետ էֆ. եւ Սահ-
մանադրութեան կաթննելով յարուցած խնդիր-
նիդ պաշտպանել կը փորձէք, եւ երեսփոխա-
նաց ալ ընդդիմութեանը հանդիպելով դժուար-
րին կացութեան մէջ կիյնաք: Հրատարեալ Քա-
ղաքական ժողովը քանի որ երկամեայ պաշ-
տօնավարութեան պայմանաժամը լրացած չէ,
վերնտրելի է ըստ Սահմանադրութեան. ինչ-
պէս 1864 ին եւ 1865 ին անժամանակ հրա-
ժարեալ Քաղաքական ժողովականք վերնտրելի
եղած են: Աւստի այս մասին Սահմանադրու-
թեան պարսպ տեղը կը յենուք եւ հրատար-
եալ Քաղաքական ժողովականաց սիրտը կը
խոցէք առաջարկութեան ձեւովնիդ. բայց
կրնաք երեսփոխանաց ուշադրութեանը յանձ-
նել թէ հրատարեալ Քաղաքական ժողովականք
որոնցմէ մէկն ալ ես եմ, եթէ վերնտրուին
ալ, պաշտօն վարելու դիտաւորութիւն չու-
նին, ինչպէս հոս այժմ իմ հրատարեալ պաշ-
տօնակիցներէս ոմանք յայտարարեցին, նոյնպէս
ես ի դիմաց համայն անդամոց հրատարեալ
Քաղաքական ժողովոյ կը յայտարարեմ թէ մե-
զի համար անկարելի է վարել այդ պաշտօնը,
ինչպէս որ Սոցալտոս 3 թուականաւ հրատա-
րագրով ծանուցած եւ անկարելութեան պատ-
ճառներն ալ իմաց տուած ենք, որոնց քննու-

թիւնն արդէն խնդրոց կարգն անցած ըլլան
այժմ տեղեկացանք Մաղլըմեան եւ Պէկեան է-
ֆէնտիներու առաջարկութեանը եւ ձեռք Կոր-
ուած բացառութեանը վրայ. ասիկայ բաւա-
կան է մեզ: Եւ ըստ որում Ատենապետ էֆ.
այս առթիւ Սահմանադրութեան անթերի գոր-
ծադրութիւնը կը յայտարարէք Դիւանին վը-
րայէն, զոր ուրախ եւ գոհ սրտով կը լսենք,
պարտ կը համարեմ յիշեցնել ձեզ թէ անցեալ
տարի Ընդհանուր ժողովն օրէնք մ'ալ դրած է
բաց ցանկի վրայ քուէարկելու: Քաղաքական
ժողովոյ ընտրութիւնը, ուստի իրաւունք կու-
նենամ հարցնել թէ ո՞ւր է այդ ցանկը, որ
կրնար արդի հանգամանաց պահանջմամբ պատ-
րաստուիլ եւ իւրաքանչիւր երեսփոխան անոր
համաձայն իր ընտրական իրաւունքը կը գոր-
ծադրէր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը սահմանադ-
րութեան մէկ օրէնքը յիշեցնելով հրատարեալ
Քաղաքական ժողովոյ անդամոց ոմանց սիրտը
ցաւցընելու պատճառ եղաւ. ինչ կարող եմ ը-
նել քանի որ օրէնքը այնպէս տրամադիր է ե-
ղած, եւ քանի որ հրատարեալ անդամները կը
յայտեն թէ նորէն Քաղաքական ժողովոյ պաշ-
տօն չպիտի ընդունին եթէ վերնտրուին. խըն-
դիրը պարզուեցաւ, եւ ինչպէս յայտարարեցի
թէ ասկէց առաջ եղած զեղծումներն օրէնք
չեն կրնար ըլլալ. նորէն Քաղաքական ժողով
մը պէտք է ընտրել առանց հրատարեալները
ընտրելու. ասոր ընդդիմութիւն ընելը հակա-
ռակ է Սահմանադրութեան եւ քաղաքական
նայուածքով մեծ թերութիւն է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Յայտարարու-
թիւննիդ, Ատենապետ էֆ. Ընդհանուր ժող-
ովոյ օրէնսդրական հեղինակութեանը գէժ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ազգային ընդհանուր ժո-
ղովին հեղինակութիւնը քաջ գիտեմ, երանի
թէ երեսփոխաններն ալ իրենց պարտաւորու-
թիւնը քաջ գիտնային, հրատարեալ Ատենա-
պետ էֆէնտիներն ալ իրենց պարտաւորութիւ-
նը ճանչցան կարծեմ. ազգին այժմեան վիճա-
կը ամենեցունց յայտնի է, ազգային Պատրի-
արքարանին մէջ գործերը երեսի վրայ մնա-
ցած, ազգը կուսակցութեանց բաժնուած, տա-
կաւին մենք հոս կը վիճարանենք փուճ տեղը,
գուցէ այն մտօք որ ժողովին ատենադրու-

թիւնները լեցուին եւ մեր թողութեանը զանոնք
կարդալով սքանչանան, եւ մեր դործոցը վրայ
զմայլին, երկու երեք տարուան մէջ անա այս
ըսածներս է մեր հեղինակած գործը. թողէք
կաղաչեմ որ շինուած օրէնք մը յարգուի: Եւ
կատարենք մեր այսօրուան պարտքը. վասն զի
խոստացանք Բ. Դրան սահմանադրապէս քա-
ղաքական ժողով կազմել եւ տեղապահ ընտ-
րել:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ես չեմ կարծեր որ հը-
րատարեալ Քաղաքական ժողովոյ անդամոց
վերընտրութիւնը Սահմանադրութեան տառին
կամ ոգւոյն դէմ ըլլայ: Սահմանադրութիւնը
օրինական պայմանաժամը լրացնող Քաղաքա-
կան ժողովոյ անդամոց համար տրամադրած է
որ անմիջապէս վերընտրելի չըլլան, եւ այս
մէկ պատճառով, սահմանադրական կարեւոր
սկզբունք մը յարգելու համար, իշխանութեանց
մշանջնաւորութիւնն արգելելու համար: Պահ-
մ'առաջ Մատթէոս վարդապետ հարցուց թէ նոր
ընտրուելիք Քաղաքական ժողովը նախորդին
չարունակութիւնը պիտի ըլլայ թէ ոչ նորէն
2 տարւոյ շրջան պիտի կատարէ: Այս հարց-
ման պատասխանին մէջ է ներկայ խնդրոյն ալ
լուծումը: Քաղաքական ժողովն իր 2 տարւոյ
շրջանը լմնցող օր ըստ Սահմանադրութեան
լուծուեցա՞ւ. — չէ՛. Սրբազան Պատրիարքը
հրատարեցաւ, անոր համար եւ նոյն օրը Քա-
ղաքական ժողովն ալ հրատարեցաւ: Ընդհա-
նուր ժողովը յանձնաժողով մը կարգեց այս հը-
րատարականաց պատճառները քննելու համար:
Յանձնաժողովին տեղեկագիրը կարդացուեցաւ
բայց քուէարկուեցա՞ւ մի Ընդհ. ժողովին մէջ.
— չէ՛. ոչ Սրբազան Պատրիարքին հրատարա-
կանն ընդունուեցաւ Ընդհ. ժողովին մէջ, ոչ
Քաղաքական ժողովինը. միեւնոյն բանն Ար-
տաքին գործոց Վսեմափայլ պաշտօնէին ալ ը-
սի, երբ այս խնդրոյն համար խորհրդակցու-
թեան հրաւիրեր էր ազգայիններէն ոմանք.
բայց քանի որ Սրբազան Պատրիարքին հրատա-
րականը կատարուած իրողութիւն մը կը հա-
մարուէր, Ընդհ. ժողովն իմաստութեամբ եւ
քաղաքականութեամբ պիտի վարուէր անշուշտ
նոյնպէս կատարուած իրողութիւն մը համարե-
լով նաեւ Քաղաքական ժողովին հրատարակա-
նը եւ անշուշտ այս քաղաքականութեան եթէ
պիտի հետեւինք, կատակերգութիւն չպիտի

խաղանք ու միւս կողմէն նորէն միեւնոյն ան-
ձինքը Քաղաքական ժողովականութեան ընտ-
րենք: Մէջերնիդ կարծողներ կըլլան թէ ես
ասանկ կը խօսիմ, վասն զի հրատարեալ Քա-
ղաքական ժողովոյ անդամոց դէմ եմ. այդպէս
կարծողները կը սխալին. այդ անդամոց մէջէն
երկուքը միայն կ'առնեմ, որոնք ամենէն ա-
ւելի ենթակայ եղած են յարձակմանց. Բրիս-
տոստուր էֆէնտին եւ Փափագեան էֆէնտին.
ես երկուքն ալ կը սիրեմ. մէկն իբրեւ անձ-
նուէր ընկերութեան հիմնադիր ու անընդհատ
անդամ այսքան տարիներէ ի վեր, այնպիսի
ծառայութիւններ մատուցած է ու կը մատու-
ցանէ ազգին որոնց յարգն ամենէն աւելի կը
ճանչնամ. ես կը փափաքէի որ իր քույր գոր-
ծունէութիւնն այդ նպատակին նուիրէր: Միւ-
սը, Փափագեան էֆէնտին, ես անոր չափ գոր-
ծունեայ մարդ քիչ կը ճանչնամ: Աւրեմն ան-
ձանց դէմ բան մը չուճիմ, Բայց Սրբազան
Պատրիարքին տեղ Տեղապահ մը պիտի ընտ-
րուի, ու մենք լուրջեմք կրնա՞նք կոր
այս տնօրէնութիւնը. ընտրենք նոր Քաղաքա-
կան ժողով մ'ալ որ հրատարեալ Քաղաքական
ժողովին տեղը պահէ մինչեւ վերանորոգման
Սահմանադրական պայմանաժամը: Քաղաքա-
կան ժողովոյ անդամք իրենք ալ յայտարարեցին
որ եթէ վերստին ընտրուին չը պիտի ընդու-
նին: Աւստի այս խնդիրը գոցուած է: Կը մը-
նայ տեղեկագիրին խնդիրը բաց. եւ ես միայն
անոր համար եկայ ժողովին, բայց կը նայիմ
որ այսօր օրը չ'է այդ խնդրոյն. նորէն պիտի
դամ երբ այդ խնդիրը վիճարանութեան դըր-
ուի եւ իբրեւ տեղեկագիր պիտի պաշտպանեմ
մեր տեղեկագիրն այնքան յարձակմանց ու
այնքան զրպարտութեանց դէմ, որոնց նշուակ
ըրին ոմանք թէ՛ զՅանձնաժողովն եւ թէ՛ զՏե-
ղեկագիրն, տեղեկագիրն որ աներկիւզ կըսեմ
ձեզի այսօրու ընէ կատարեալ անաչառութեան
ու անկողմնակալ ճշմարտասիրութեան գործ
մ'է:

(Հանձնութեան ցոյցեր)

ՊԵՆԱՆ Թ. ԷՖ. — Կառավարեմ որ 10
վայրկեան միջոց տրուի մեր պատրաստած քը-
ւէները սրբագրելու համար:

Սոյն առաջարկութեան վրայ, որ ընդդէմ

ԴԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի 'ի Դիւ անատան Պատրիարքարանի, և կը գտնուի
ամեն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկալները :